

Արձանագրություն №4/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած թիվ 4 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 73-ը (յոթանասուներեքը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

Նիստի քարտուղարն էր Լ.Ս. Հովսեփյանը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Մարտիրոսյան):
2. Հաղորդում ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
3. Հաղորդում ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյան):
4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2019-2020 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ մասնաճյուղի տնօրենի պաշտ. Ա. Մակարյան):
5. ԵՊՀ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների կառուցվածքն ու կազմը հաստատելու մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան):

Ընթացիկ հարցեր

- 6.1. «Ֆիզիկա» աշխատանքը (հեղ.՝ Ա. Մուրադյան, Գ. Մուրադյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:
- 6.2. «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» երկրորդ գիրքը (հեղ.՝ Ռ.Խ. Աղամյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:
- 6.3. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հաշվետվությունների մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

7.	ՀՀ ԿԳՄՄՆ ԳԳՄՄՆ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ՊՐՈԳՆՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՑՈՒՄ ԶՆՈՐԻՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ:	64	0
8.	ՀՀ ԿԳՄՄՆ ԳԳՄՄՆ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ՊՐՈԳՆՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՑՈՒՄ ԶՆՈՐԻՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ:	63	1
9.	ՀՀ ԿԳՄՄՆ ԳԳՄՄՆ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ՊՐՈԳՆՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՑՈՒՄ ԶՆՈՐԻՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ:	64	0

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ՊՐՈԳՆՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՑՈՒՄ ԶՆՈՐԻՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ:

2.Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ԵՊՀ 2020թ. 11 ամիսների դրությամբ եկամուտները նախատեսվածի նկատմամբ հավաքվել են 85 տոկոսով, իսկ ծախսերը կատարվել 81 տոկոսով: Նախահաշվի կատարողականը պրոֆիցիտային է, նախորդ տարի նույն ժամանակահատվածում այն կազմել է 808 մլն դրամ: Ուսման վարձավճարներից եկամուտների կատարողականը կազմել է 74 տոկոս, իսկ նախորդ տարվա համեմատ այն նվազել է 13 տոկոսով, ինչը պայմանավորված է երկրում գործող համավարակի, ռազմական դրության և ուսման վարձերը ըստ ամիսների վճարելու կարգի հետ: Բացի դա հաշվետու տարում վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցում կատարվեց բյուջեի միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից սահմանված 14-րդ միջոցառումը, որի շրջանակներում փոխհատուցվեց 225 միլիոն դրամ ուսման վարձ: Միջին ուսման վարձի չափը (հաշվի առած զեղչերը) ԵՊՀ-ում 2020թ. կազմել է 468000 դրամ:

Ռ. Գրիգորյանի ներկայացմամբ՝ 2019/2020 ուստարվա արդյունքներով ԵՊՀ-ի կողմից զեղչվել են թվով 2843 ուսանողների ուսման վարձերը, որը կազմել է 388 միլիոն դրամ: Միջին հաշվով մեկ ուսանողի զեղչը կազմել է 136500 դրամ:

Պետական ֆինանսավորումն իրականացվում է ըստ կրթական և գիտական ծրագրերի: Մեկ ուսանողի համար պետական նպաստը կազմել է 779500 դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են միջին տարեկան թվով 2574 ուսանողներ, որոնցից 156-ը՝ Իջևանի մասնաճյուղում:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը նախատեսվածի նկատմամբ ստացվել է 91 տոկոսի չափով: Հաշվետու տարում ՀՀ ԿԳՄՄ նախարարության և ԵՊՀ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ 60 միլիոն դրամով ֆինանսավորվել են ՀՀ դեսպանատները՝ հավատարմագրման երկրներում հայագիտական կենտրոնների պահպանման և հայոց լեզվի դասավանդման ծրագրեր իրականացնելու համար:

Ձեռնարկատիրական այլ եկամուտների գծով 11 ամսյակի դրությամբ նախատեսված ցուցանիշները կատարվել են ընդամենը 41 տոկոսով, ինչը պայմանավորված է 2020 թ. երկար ժամկետով ԲՈՒՀ-ի ֆիզիկապես փակ լինելու հանգամանքով:

Նա անհրաժեշտ համարեց նշել, որ ԵՊՀ-ում կա էական շրջանառություն դրամաշնորհային ծրագրերի մասով և 11 ամսվա կտրվածքով կատարողականը կազմում է 504 միլիոն դրամ կամ նախատեսվածի նկատմամբ արդեն 100 տոկոս: Բանկերից ստացվող տոկոսային եկամուտներն էլ 11-ամսյա ժամկետում արդեն գերակատարվել են և կազմում են ընդհանուր եկամուտների 5 տոկոսը:

Ծախսեր.

Աշխատավարձի ծախսերը կատարվել են 88 տոկոսով: Հաշվետու տարվա 11 ամսվա դրությամբ աշխատողների միջին ամսական թիվը կազմել է 2603 մարդ: Միջին ամսական աշխատավարձը 1 մարդու հաշվարկով կազմել է 194 հազար դրամ՝ ներառյալ հարկերը, իսկ նվազագույն ամսական աշխատավարձը՝ 93 հազար դրամ: Հաշվետու տարում բոլոր հիմնական աշխատողներին դեկտեմբեր ամսին վճարվեց պարգևատրում 13-րդ աշխատավարձ: Շարունակվում է աշխատողների առողջության ապահովագրության ծրագիրը, այս ծրագիրը շարունակական է և նախատեսված է նաև հաջորդ տարվա նախահաշվում:

Ամբողջովին նորոգված և կահավորված ուսանողական հանրակացարանում մատուցվում են կեցության ծառայություններ: Որպես քառօրյա պատերազմի մասնակից թվով 8 ուսանողներ ծառայությունները ստանում են անվճար:

Շարունակվում է նաև 2016թ. ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների երեխաներին ֆինանսական աջակցության ծրագիրը: Այժմ աջակցություն են ստանում թվով 22 ընտանիքներ, ամսական գումարը 1 ընտանիքի համար կազմում է 40000 – ից 100000 դրամ, որը կախված է անչափահաս երեխաների թվից, իսկ 22 ընտանիքներին վճարվող ամսական ընդհանուր գումարը կազմում է 1.4 միլիոն դրամ:

Դրամական միջոցների մնացորդը 2020թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 6.7 միլիարդ դրամ:

Ի լրումն ներկայացվածի՝ Գ. Գևորգյանը նշեց, որ պրոֆիցիտային մասը չի մնա, կծախսվի, քանի որ դեկտեմբերը ծախսատար ամիս է՝ պայմանավորված 13-րդ աշխատավարձի, շինարարական աշխատանքների վերջնահաշվարկի և այլ ծախսերի հանգամանքի հետ:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանն անդրադարձավ Բանբեր Երևանի համալսարանի հանդեսի հետայսու միայն էլեկտրոնային հրատարակության խնդրին՝ դա համարելով սխալ և որակելով որպես «խայտառակություն»: Նա նաև հետաքրքրվեց, թե արդյո՞ք կապված է ծախսերի խնայողության հետ: Ի պատասխան՝ Գ. Գևորգյանը ճիշտ չհամարեց հնչեցված որակումը՝

պարզաբանելով, որ էլեկտրոնային հրատարակություններն աշխարհում ընդունված են և լայն տարածում են գտնում, քանի որ լուծվում է առավել լայն տարածման ու օպերատիվ հրատարակման խնդիրը: Իսկ համալսարանական հանդեսները շատ դեպքերում խնդիր են ունենում որակյալ հոդվածների հավաքման, ֆիքսված ժամկետներում դրանք հրատարակելու, ինչպես նաև լայն տարածում ապահովելու հարցերում: Նա նաև նշեց, որ որոշումը կայացվել է հանդեսի շարքերի պատասխանատուների հետ խորհրդակցության արդյունքում և կարևորեց միջազգային հեղինակավոր շտեմարաններում ԵՊՀ գիտական հանդեսների ընդգրկման հարցն ու դրանց միջազգայնացումը: Արհմիության նախագահ Արմեն Ավետիսյանը հետաքրքրվեց հատկապես կոմունալ ու այլ ծառայությունների կրճատման պարագայում խնայված միջոցների մասին, քանի որ 2020թ. մարտ ամսից ԵՊՀ-ն անցել էր աշխատանքային ու դասավանդման օնլայն ռեժիմի: Ի պատասխան՝ Գ. Գևորգյանը նկատեց, որ մարտ ամսից արդեն գազի-ջեռուցման խնդիր չկար, գազի համար խնայողությունները նոր պիտի արվեն, սակայն իրականում խնայողություն չի լինի, քանի որ աշխատակիցների մի հատվածն ամենօրյա ռեժիմով գալիս է աշխատանքի, ինչը կարող է բերել գազի վճարի էլ ավելի բարձրացման: Էլեկտրաէներգիայի մասով ևս էական խնայողություններ դժվար թե լինեն, քանի որ լուսավորությունը և համակարգիչները հիմնականում աշխատել են, որոնք մեծ խնայողություն չէին բերի: Եղած խնայողությունների պարագայում էլ համավարակով պայմանավորված եղել են մեծ ծախսեր և չմուտքագրված գումարներ: Չմուտքագրված գումարներ կան ԵՊՀ հանրակացարանից, շատ քիչ թիվ են կազմում Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայից ստացված գումարները, պակասել է մուտքագրումը մարզադահլիճից և զրոյական մուտքագրում հյուրատնից: Խնայողություններ եղել են առավելապես գործուղման ծախսերից, որոնք ուղղվել են տեխնիկական միջոցների ձեռքբերմանը: Համավարակը իր հետ բերել է նաև այլ չնախատեսված ծախսեր: Ուսանողական զեղչերի քանակն էականորեն ավելացել է: Պատերազմի հետ կապված 50 մլն դրամ փոխանցվել է Հայաստան համահայկական հիմնադրամին, 5 մլն դրամ համավարակի կանխարգելման հիմնադրամին և 10 մլն դրամ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին:

Որոշեցին. – ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

3.Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ նախահաշիվը դեֆիցիտային է, որը կազմում է 186 մլն դրամ: Դեֆիցիտը ոչ թե պայմանավորված է ծախսերի ավելի պլանավորմամբ նախատեսվող եկամուտներից, այլ՝ նախորդ տարիներին դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսավորմամբ և հաշվետու տարում նախատեսվող ծախսերի կատարմամբ: Դեֆիցիտը պայմանավորված է

դրամաշնորհային ծրագրերով և լրացման աղբյուրը նախորդ տարիների ստացված և չծախսված դրամական միջոցների մնացորդն է:

Նրա հաղորդմամբ՝ համախառն եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելանում են շուրջ 6 (վեց) տոկոսով կամ 600 միլիոն դրամով: Կրթական ծառայությունները նվազում են 2 տոկոսով կամ 126 միլիոն դրամով, որը պայմանավորված է պետական աջակցությամբ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրերում ավելի մեծ թվով ուսանողների ընդգրկմամբ, մասնավորապես՝ «Պատիվ ունեն» ծրագրին մասնակցող, մարտական գործողություններին մասնակցած, 2 և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների, սոցիալապես անապահով, սահմանամերձ համայքների ուսանողների, արտոնություն ունեցողների: Այս ծրագրերին մասնակցում են շուրջ 1050 ԵՊՀ-ից և 320 Իջևանի մասնաճյուղից վճարովի համակարգում սովորող ուսանողներ: 2020/2021 ուսումնական տարվանից մեկնարկեց ասպիրանտուրայի հեռակա ուսուցմամբ վճարովի ուսուցմամբ ընդունելությունը, որի արդյունքում այդ գծով եկամուտները նախորդ տարվա համեմատ կավելանան ավելի քան 14 միլիոն դրամով:

Ըստ այդմ՝ նախահաշվի համախառն եկամուտների նկատմամբ ուսման վարձավճարներից եկամուտները կազմում են 53.5 տոկոսը: ԵՊՀ-ում նվազագույն ուսման վարձի չափը կազմում է 500 հազար դրամ բակալավրի 28 մասնագիտությունների համար ընդհանուր 54-ից: Առավելագույնը՝ 1 միլիոն դրամ ընդամենը մեկ մասնագիտության գծով, մնացած մասնագիտությունների ուսման վարձի չափերը տատանվում են 580-ից 780 հազար դրամի սահմաններում: Ուսման վարձավճարներից նախատեսվող եկամուտները հաշվարկելիս հաշվի է առնվել 400 միլիոն դրամի չափով ուսման վարձի գեղչերի տրամադրում: 2019/2020 ուստարում տրամադրվել է 388 միլիոն դրամի գեղչ թվով 2843 ուսանողների: ԵՊՀ-ում 2020 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ սովորողների թիվը կազմում է 14274, որոնցից 1131-ը Իջևանի մասնաճյուղում, վճարովի համակարգում սովորում են 11700 սովորողներ, պետական ֆինանսավորմամբ՝ 2574:

Պետական ֆինանսավորումը ավելացել է շուրջ 24 տոկոսով և համախառն եկամուտներում կազմում է 33.7 տոկոսը: Սակայն պետք է հաշվի առնել, որ պետական ֆինանսավորմամբ ծրագրերում ներառվում են 52 միլիոն դրամի օտար երկրներում հայագիտական կենտրոնների պահպանման և հայոց լեզվի դասավանդման ծրագրեր, որոնք հանձնարարության պայմանագրերի համաձայն ստացված ֆինանսավորումները ԵՊՀ-ի կողմից փոխանցվում է օտար երկրներում ՀՀ դեսպանատներին:

Էականորեն մեծացվել է պետական ֆինանսավորմամբ սովորող 1 ուսանողի գումարը, որը կազմում է 780 հազար դրամ նախկինում 640 հազար դրամի փոխարեն:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերը կազմում են համախառն եկամտի շուրջ 10 տոկոսը: Դրանից 477 միլիոն դրամը բազային լաբորատորիաների ծրագրերն են: 2020 թ.-ից մեկնարկած, սակայն 2021 թ.-ին ավարտվող ունենք 230 միլիոն դրամի թեմատիկ

ծրագրեր և ակնկալում ենք, որ 2021 թ.-ին մրցութային ծրագրերի հայտարարվելուց հետո թեմատիկ ծրագրերի շրջանառությունը կավելանա ևս 70 միլիոն դրամով: Ֆինանսավորվելու են նաև գիտաշխատողների հավելավճարները գիտական աստիճանների համար 112 միլիոն դրամ, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագիրը 9 միլիոն դրամ: Հաշվետու տարում ԵՊՀ-ն մասնակցում է նաև համաֆինանսավորմամբ գիտական ծրագրի իրականացմանը. ներդրումը՝ 6.6 միլիոն դրամ, նպատակը լաբորատոր սարքավորմների ձեռքբերում:

Կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեության մասով եկամուտները նվազել են շուրջ 12 տոկոսով, բայց համախառն եկամուտներում այս հոդվածի ցուցանիշները դեռ էական չեն և կազմում է ընդամենը 3.4 տոկոսը: Նվազումը պայմանավորված է համավարակի և ռազմական դրությամբ: ԵՊՀ-ն շարունակում է իրականացնել ներդրումային քաղաքականությունը իր ուսումնաարտադրական բազաներում և այժմ ավարտին է հասցվում Բյուրականի բազայի 1 կորպուսի և ճաշարանի շենքի ամբողջական հիմնանորոգումը:

Դրամաշնորհային ծրագրերը ևս ավելացել են և կազմում են ընդհանուր եկամուտների շուրջ 6 տոկոսը, կամ 628 միլիոն դրամ: Բանկերից ստացվող տոկոսային եկամուտները կազմում են 3 տոկոսը, կամ 300 միլիոն դրամ:

Ծախսեր.

1. 2021 թ. նախահաշվի ծախսերի շուրջ 70 տոկոսը կազմում են աշխատավարձերը: Հաշվի առնելով նախորդ տարվա համեմատ սակավաթիվ ուսանողների ընդունելությունը, հաջորդ տարում էլ պակաս նախատեսվող ընդունելությունը, արդյունքում նվազել են դասախոսական դրույքների քանակը: Սակայն 2021թ. հունվարի 1-ից նախատեսված է դասախոսական անձնակազմի աշխատավարձը բարձրացնել 10 տոկոսով: Մնացած անձնակազմի աշխատավարձերը նույնչափով բարձրացնել սեպտեմբերի 1-ից: Նախատեսված է նաև տարեվերջյան 13-րդ աշխատավարձը և բացի դա սեպտեմբեր ամսին ամբողջ անձնակազմին ևս մեկ պարգևատրում հիմնական աշխատավարձի 50 տոկոսի չափով: 2021թ. աշխատավարձի ծախսերում հաշվի է առնվել նաև ներառական կրթություն ստացող ուսանողներին աջակցություն ցուցաբերող անձանց համար նախատեսվող վարձատրությունը:
2. Բյուջե փոխանցվող հարկերը ավելացվել են ի հաշիվ նրա, որ գործատուները իրենց վրա են վերցնում 1000 + հիմնադրամին փոխանցվող դրոշմանիշային վճարների պարտավորությունը յուրաքանչյուր մարդու հաշարկով ևս 2000 դրամ տարեկան կտրվածքով այն կազմում է 60 միլիոն դրամ: Երկրորդը եկամտային հարկը 50 միլիոն դրամ, որը հիմնականում կապված է օրենքով նախատեսված ուսանողների 10 տոկոս թվից ավել ուսանողներին ուսման վարձերի գեղչեր հատկացնելու հետ:

Ավելացված արժեքի հարկի պարտավորությունը ոչ թե ավելացել է այլ սպառվել է նախորդ տարիներում կուտակված ԵՊՀ-ի գերավճարը:

3. Կոմունալ ծախսերից ավելացվել են գազի ծախսերը պայմանավորված գազի սակագնի բարձրացման հետ:
4. Ապրանքանյութական ծախսերից սննդի ապրանքների ձեռքբերման հողվածք փոխարինվել է հանրային սննդի մատուցման ծառայություններ հողվածով և տեղափոխվել է ծառայությունների ձեռքբերման հողված:
5. Գործուղման ծախսերը կապված համավարակի հետ նվազեցվել են վարչական անձնակազմի և ֆակուլտետների համար:
6. Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրման և այլ հեղինակներից գրքերի ձեռքբերման գումարների ավելացմամբ մեծացվել են գրադարանային ծախսերը 7.5 միլիոն դրամով:
7. Ներդրումային ծրագրերը կամ ոչ ընթացիկ ծախսերը 2021թ. կազմում են ընդհանուր ծախսերի 8 տոկոսը, որից 5-ը գույքի ձեռքբերման համար, 3 տոկոսը շինարարության համար:

Լաբորատոր սարքավորումների գումարը ավելացվել է ի հաշիվ դրամաշնորհային ծրագրերի: Ավելացվել է գեներատորի ձեռքբերման հողվածք, որը անհրաժեշտ է սերվերային սենյակի անխափան էլեկտրամատակարարման համար: Նախատեսվում է նոր միկրոավտոբուսի ձեռքբերում ի հաշիվ այս պահին ավտոպարկում առկա, սակայն չշահագործվող երկու այլ տրանսպորտային միջոցների օտարման:

Սովորող անդամ Արթուր Նիգարյանը հետաքրքրվեց, թե 2021թ. բյուջեի նախահաշվում նախատեսվող քիմիական լաբորատոր նյութերի, սարքերի ձեռքբերման, ուսումնական մասնաշենքերի, դահլիճների, գրադարանների լաբորատորիաների վերանորոգման ծախսերն ի՞նչ համամասնությամբ են կատարվելու և քիմիայի ֆակուլտետում մասնավորապես ի՞նչ գործողություններ են արվելու այդ ուղղությամբ, ինչպես նաև արդյո՞ք նախատեսվում են ուսանողական գիտատեխնիկական լաբորատորիայի հիմնանորոգման, վերազինման ծախսեր: Քիմիայի ֆակուլտետի դեկան Տարիել Ղոչիկյանը նշեց, որ նախատեսվում է 2 լաբորատորիայի վերանորոգում և ՈՒԳԸ գծով 1 լաբորատորիայի հիմնում: Բոլգորոդի համալսարանի հետ համագործակցության ծրագրի շրջանակում յուրաքանչյուր տարի հատկացվող 3 մլն դրամի առկայության վերաբերյալ ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Աշոտ Սադյանի հարցին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ 2021թ. նախահաշվում ևս ներառված է այդ գումարը: Վերջինս անդրադարձավ նաև դասախոսական կազմի աշխատավարձերի բարձրացման խնդրին՝ նշելով, որ զեկուցագիր էր ներկայացվել հոգաբարձուների խորհրդին, որը սակայն այդ հարցով նիստ չէր իրականացվել: Հոգաբարձուների խորհրդում լուծում ստանալու անհնարինության դեպքում, աշխատավարձերի բարձրացման հարցը լուծում կստանա պարզևատրման միջոցով փոխհատուցելու տարբերակով:

Որոշեցին.– ԵՊՀ 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4.Լսեցին. – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2019-2020 ուստարվա գործունեության մասին: Մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանը ներկայացրեց, որ մասնաճյուղում ուսումնական գործընթացն ընդհանուր առմամբ իրականացվել է ռազմավարական զարգացման պլանին համապատասխան: 2019-20 ուսումնական տարին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար մեկնարկել է հատուկ ոգևորությամբ և հետաքրքիր միջոցառումներով, գիտաժողովներով, աշխատաժողովներով՝ պայմանավորված Մայր բուհի 100-ամյա և նրա միակ մասնաճյուղի 25-ամյա հոբելյաններով: 25 տարի մասնաճյուղը հաջողությամբ կատարում է իր կրթական գործառույթները: Ըստ հաղորդման՝ այդ տարիների ընթացքում մասնաճյուղը շուրջ 6000-ից ավել շրջանավարտ է ունեցել, ովքեր անփոխարինելի դերակատարություն ունեն տարածաշրջանի բոլոր ոլորտներում: Ա. Մակարյանը ներկայացրեց 2019թ. վերջին Տավուշի մարզի և հարակից մարզի համայնքներում անցկացված հարցումների տվյալները, ըստ որոնց հարցվածների 91 տոկոսը գտնում է, որ ԻՄ-ը սոցիալ-մշակութային, կրթական կարևոր նշանակություն ունի մարզում:

2019-20 ուսումնական տարին մասնաճյուղում կրթությունն իրականացվել է արտաքին փորձաքննություն անցած 13 կրթական ծրագրերով, որոնք տարեվերջին վերանայվել են հետազոտական բաղադրիչի ներդրման նպատակով. գործող բոլոր ծրագրերի համար առանձնացվել են հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացները, վերանայվել վերջնարդյունքները և փաթեթները, դասավանդման և ուսումնառության մեթոդները: Տարածաշրջանի աշխատաշուկայի ուսումնասիրությունները և այդ ոլորտներում առկա խնդիրները մասնաճյուղին ուղղորդում են մշտապես վերանայել իրականացվող կրթական ծրագրերի ցանկը: Դրա ապացույցն են 2019-20 ուսումնական տարուց իրականացվող բակալավրական 3 նոր կրթական ծրագրերը՝ «Հոգեբանություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ», ԿԳՄՄՆ լիցենզավորման գործակալության կողմից հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրով կրթություն իրականացնելու թույլտվությունը: Սկսվել են նաև «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական և «Մեխատրոնիկա և ռոբոտոտեխնիկա» բակալավրական կրթական ծրագրերի ներդրման հայտերի պատրաստման գործընթացները:

Հաշվետու ուսումնական տարին մասնաճյուղի առկա ուսուցմամբ 13 կրթական ծրագրերով ընդունվել է 166 դիմորդ (նախորդ ուսումնական տարին 76-ի փոխարեն): Մասնաճյուղի 336 դիմորդներից 326-ը (շուրջ 97%-ը) Տավուշի մարզի դպրոցների

շրջանավարտներն են: Տարեցտարի ուսանողների թիվը ԻՄ-ում պակասում է, ինչը կապված է ամենայն հավանականությամբ ժողովրդագրական խնդիրների հետ: 2019-20 ուսումնական տարում մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում ուսանել է 1307 ուսանող (նախորդ ուսումնական տարին՝ 1355): Նրանցից 1156-ը սովորել է վճարովի համակարգում, 118 ուսանող օգտվել է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից: 110 ուսանողների հատկացվել են պետական և ներ-բուհական կրթաթոշակներ, որոնցից 7-ին՝ անվանական: Ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրվել է մասնաճյուղի 250 ուսանողի առկա և հեռակա ուսուցման համակարգում: Հաշվետու ուսումնական տարում 5 կրթական ծրագրերի ուսանողների համար մասնաճյուղում իրականացվել են մանկավարժի որակավորման լրացուցիչ դասընթացներ, որին մասնակցել են 1-ից 4-րդ կուրսերի 101 ուսանողներ: Մասնաճյուղում բարձրորակ և խորը մասնագիտական ուսումնառությունն ապահովում է նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմը:

2019-20 ուսումնական տարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ աշխատող 117 դասախոս, այդ թվում՝ 10 պրոֆեսոր (8,6%), 43 դոցենտ (36,8%), որոնցից գիտական աստիճանով՝ 8 դոկտոր և 62 թեկնածու. գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 59,9% է: Դասախոսական կազմի միջին տարիքը 48 է, ինչը այդքան էլ լավ ցուցանիշ չէ:

Մասնաճյուղի ղեկավարությունը խրախուսում է իր դասախոսների հետազոտական և մեթոդաբանական գործունեությունը: ԻՄ գիտական խորհրդում 2019թ. դեկտեմբերին հաստատվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգը, որով սահմանվել են աշխատողներին գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար վճարվող հաշվարկման և վճարման կարգը: Կարգում առանձնահատուկ կարևորվում և խրախուսվում են գիտական գործունեության արդյունքները: Կարգի համաձայն 2019թ. սեպտեմբերից մինչև 2020թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար աշխատակիցները կստանան շուրջ 500 հազ. դրամ լրավճար, ինչը մեծ չէ, բայց կարևոր քայլ է և այն վճարվում է միայն հիմնական դասախոսական կազմին:

Մասնաճյուղի դասախոսական և ուսանողական կազմի գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացմանը, տարբեր ոլորտներում հետազոտական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցելու համար մասնաճյուղում 2020թ. հուլիսից հիմնվել է «Տավուշ» հետազոտական կենտրոնը: 2021 թվականից կենտրոնը կկազմակերպի գիտական դրամաշնորհների առաջին մրցույթը:

Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակվել է 34 գիտական հոդված, նրանք մասնակցել են հանրապետական 1 և միջազգային 6 գիտաժողովի: Հատկապես ակտիվ են եղել կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսները, ովքեր մասնակցել են հանրապետական և միջազգային ցուցահանդեսների:

2019-20 ուսումնական տարում մասնաճյուղում շարունակվել է «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» 2016-21թթ. շրջափուլի իրականացումը: Վերապատրաստումների արդյունավետ և նպատակային իրականացման, կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացների բարելավմանը աջակցելու համար մասնաճյուղում 2020թ. հունվարին ստեղծվել է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը: Որակավորման բարձրացման ծրագրի մոդուլներով առկա և առցանց տարբերակներով իրականացվել է 6 դասընթաց: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ուսուցման նորարարական մեթոդների մատուցմանը:

Մասնաճյուղը վարում է կայուն ֆինանսական և ռեսուրսախնայողության քաղաքականություն, աշխատավարձերը վճարվում են առանց ուշացումների, 2-րդ կիսամյակի առցանց ուսումնառությունն իր հերթին ապահովել է որոշակի խնայողություն: Ֆինանսների հոսքեր ապահովվել են նաև 2019 թվականին ներդրված ավանդների գծով՝ այն ավելացնելով 270 մլն դրամով: Սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղը ապահովագրական ընկերության հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն առաջին անգամ մասնաճյուղի 151 հիմնական աշխատակից մինչև տարեվերջ ունեցել են առողջության ապահովագրություն:

Անցած ուսումնական տարում տարբեր նպատակներով մասնաճյուղի արհրյուրոյի ֆինանսական միջոցներից աջակցություն է ստացել 24 աշխատակից: Համավարակով պայմանավորված հաշվետու ուսումնական տարին Մայր բուհի սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի աշխատակիցները չեն օգտվել ԵՊՀ հանգստյան և մարզաառողջարանային բազաներից: Ընթացել են մասնաճյուղի կայքի վերազինման աշխատանքներ, հատկապես էլեկտրոնային գրադարանի համալրման ուղղությամբ: Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի կայքն իր այցելուներին տրամադրում է առավել քան 1000 էլեկտրոնային գիրք:

2020թ. փետրվարին ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում պայմանագիր է կնքվել «Փրոջեքթ հարմոնի» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ, որի շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է «Ամերիկյան գրադարան և դասընթացի կենտրոն», որտեղ հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են անգլերեն լեզվի և այլ դասընթացներ ուսանողների, դասախոսների և մարզի աշակերտների ու երիտասարդների համար: «Synopsis Armenia» և «GG» ծրագրավորման ընկերությունների հետ համատեղ բնագիտական ֆակուլտետում

հիմնվել է «Դիջիթալ Վեյվ լաբորատորիա», որտեղ ուսանողները անցնում են դասընթացներ, անցնում պրակտիկա և այդ լաբորատորիան կլինի «Մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա» մագիստրոսական ծրագրի հիմնական բազան:

Մասնաճյուղի արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ 2019-20 ուսումնական տարում իրականացվել են մի շարք համագործակցային ծրագրեր, որոնց նպատակն է եղել ուսանողներին ներգրավել մարզի հիմնախնդիրների, ուսանողների կարիքների, սոցիալական և տնտեսական խնդիրների ուսումնասիրմանը, վերհանմանը և հնարավորության դեպքում դրանց լուծմանը: Հաշվետու ուսումնական տարում համագործակցող կազմակերպությունների, հիմնադրամների, ընկերությունների հետ համատեղ ուսանողների համար կազմակերպվել են շուրջ երկու տասնյակ առկա և առցանց դասընթացներ և քննարկումներ, այցելություններ և այլն: Տավուշի թեմի առաջնորդարանի աջակցությամբ 100 հզ. դրամի չափով փոխհատուցվել է մասնաճյուղի 25 ուսանողների ուսման վարձերը: Բավական ակտիվ են գործել մասնաճյուղի ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը, որոնք բազմապիսի կրթական, մշակութային տարբեր միջոցառումներ են կազմակերպել, այդ թվում՝ ԻՄ-ի հիմնադրման 25-ամյակի շրջանակում: Ուսանողական խորհուրդը պաշտպանում, հետևողականորեն բարձրաձայնում և լուծում է ուսանողների ուսումնական և մշակութային կարիքները:

Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը 2019-20 ուսումնական տարում արդյունավետ աշխատել է կրթական ծրագրերի ղեկավարների հետ, աջակցել է նոր կրթական ծրագրերի հաստատման գործընթացին, խորհրդատվություններով աջակցել է ամբիոններին՝ դասընթացների փաթեթների կազմման գործում, կատարել է արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, վեր է հանել խնդիրները, հավաքագրել նրանց առաջարկները և կատարել դրանց վերլուծություն: Այս գործընթացներում ակտիվ մասնակցել է նաև որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական աշխատանքային խումբը: 2020թ. հունվար-մարտ ամիսներին բաժինը համակարգել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը, որի արդյունքում կազմվել է ինքնավերլուծության զեկույցը: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա. Սադյանը հետաքրքրվեց, թե՞ ԻՄ-ի հավատարմագրումը անցկացվելու է ԵՊՀ-ի հետ միաժամանակ, թե՞ դրանից հետո, ինչին ի պատասխան Ա. Մակարյանը նշեց, որ համապատասխան կարգով նախատեսված է մասնաճյուղի հավատարմագրումը ԵՊՀ-ի կազմում՝ առանձին ժամանակացույցով: Նա նաև նշեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ-ն կանխեց առանձին հավատարմագրման գործընթացը, և տրվում է միայն մեկ հավատարմագիր Մայր բուհին: **Որոշեցին.**- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2019-2020 ուստարվա գործունեության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.Լսեցին. – ԵՊՀ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների կառուցվածքն ու կազմը հաստատելու մասին: Ռեկտորի ժ/պ Գեղամ Գևորգյանն առաջարկեց գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովը ձևավորել 9 անդամից՝ միացնելով հումանիտար-հասարակագիտական և ճշգրիտ-բնագիտական մասնագիտությունների գծով նախկինում գործած հանձնաժողովները: Մրցութային հանձնաժողովում ներկայացված կլինեն հումանիտար-հասարակագիտական և ճշգրիտ-բնագիտական մասնագիտությունների գծով հավասար թվով անդամներ: Առաջարկ հնչեց նախկինում գործած Ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով չձևավորել, քանի որ այդ ձևաչափի արդյունավետությունը բավական ցածր է եղել և դրա հիմնական գործառնությունները փոխանցել ֆակուլտետներում գործող համանման հանձնաժողովներին, որոնք ունեն հստակ պրոֆիլային ուղղվածություն: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց հանձնաժողովների առաջարկվող կազմը և կազմակերպվեց քվեարկություն:

Որոշեցին.-

1) հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման ու փորձաքննության մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. Ղազինյան Գագիկ Սերգեյի – իրավագիտության ֆակուլտետի դեկան,
2. Սարիյան Էլինա Վյաչեսլավի – պրոռեկտոր հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով,
3. Բարխուդարյան Ռաֆայել Հրայրի – պրոռեկտոր ճշգրիտ և բնական մասնագիտությունների գծով,
4. Իսրայելյան Արթուր Հրաչիկի – պրոռեկտոր միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով,
5. Մալխասյան Արման Գևորգի – պրոռեկտոր ընդհանուր հարցերի գծով
6. Հովսեփյան Լևոն Մահակի – գիտական քարտուղար
7. Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի – արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Թադևոսյան Արմեն Ադամի – անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ
9. Ավագյան Գոհար – իրավագիտության ֆակուլտետի ուսանող:

Քվեարկության արդյունքներն էին՝ կողմ 66, դեմ 1, ձեռնպահ 1:

2) հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. Գևորգյան Էմիլ Սոսի – կենսաբանության ֆակուլտետի դեկան,
2. Բուդաղյան Արմեն Ստեփանի – որակի ապահովման կենտրոնի տնօրեն,
3. Աղասյան Ժասմեն Արտաշեսի – հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ,
4. Մկրտիչյան Արթուր Երվանդի – սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան,
5. Սադյան Աշոտ Սերոբի – ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն,

6. Հովհաննիսյան Վահե Վաղինակի – քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ,
7. Փանոսյան Մերի - տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող, ՈԻԳԸ նախագահ

Քվեարկության արդյունքներն էին՝ կողմ 67, դեմ 1, ձեռնպահ 0:

3) հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. Ավանեսյան Հրանտ Միքայելի – ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ,
2. Անուշավան եպլ. Ժամկոչյան – աստվածաբանության ֆակուլտետի դեկան,
3. Ավագյան Արծրուն Աբգարի – հայ բանասիրության ֆակուլտետի դեկան,
4. Սահակյան Արթուր Արտուշի – մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան,
5. Բարխուդարյան Գոհար Արայի- տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ,
6. Նիգարյան Արթուր- քիմիայի ֆակուլտետի ուսանող,
7. Հովհաննիսյան Թերեզա-ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանող

Քվեարկության արդյունքներն էին՝ կողմ 66, դեմ 0, ձեռնպահ 2:

4) հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1. Վարդանյան Պողոս Հովհաննեսի – կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ,
2. Հովսեփյան Լևոն Սահակի – գիտական քարտուղար,
3. Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի – քիմիայի ֆակուլտետի դեկան,
4. Հակոբյան Ռաֆիկ-ֆիզիկայի ֆակուլտետի դեկան,
5. Գալստյան Վաչագան Սարգսի – մինչհամալսարանական կրթության վարչության պետ,
6. Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի – հայոց լեզվի ամբիոնի վարիչ,
7. Մելքոնյան Նվարդ Արայիկի – սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,
8. Սարգսյան Նարեկ - ռադիոֆիզիկային ֆակուլտետի ուսանող,
9. Վարդանյան Իրինա-տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող
10. *Քվեարկության արդյունքներն էին՝ կողմ 64, դեմ 0, ձեռնպահ 4:*

6.Լսեցին.- «Ֆիզիկա» աշխատանքը (հեղ.՝ Ա. Մուրադյան, Գ. Մուրադյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՍՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Ֆիզիկա» աշխատանքը (հեղ.՝ Ա. Մուրադյան, Գ. Մուրադյան) երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՍՆ-ին:

7.Լսեցին. - «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» երկրորդ գիրքը (հեղ.՝ Ռ.Խ. Ադամյան) հրատարակության

Երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» երկրորդ գիրքը (հեղ.՝ Ռ.Խ. Ադամյան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

8.Լսեցին.- ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հաշվետվությունների մասին:

Որոշեցին. – Ընդունել հաշվետվությունները՝ հաշվի առնելով, որ դրանք բավարարում են գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերի հաշվետվություններին ներկայացվող պահանջները:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

25.12.2020թ.